

Հաղթողներն արդեն որոշված են

Ինչպես հայտնի է, Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միությունը նախաձեռնել էր «ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտի լուսաբանումը ՁԼՄ-ներում» թեմայով լրագրողների մրցույթ, որի նպատակն էր խթանել Հայաստանի Տեղեկատվական և Հեռահաղորդակցության Տեխնոլոգիաների /ՏՀՏ/ ոլորտի զարգացումը, բարձրացնել հասարակության իրազեկությունը ոլորտի զարգացումների մասին, խորացնել ՏՀՏ թեմատիկայով ստեղծագործող լրագրողների հմտությունները:

Արդեն ամփոփվել են մրցույթի արդյունքները: Դեկտեմբերի 24-ին Արմենիա Մարիոթ հյուրանոցային համալիրում անցկացված ՏՏ ոլորտի տոնակատարության ժամանակ տեղի ունեցավ լրագրողների մրցանակաբաշխությունը: Անցկացվեց նաև Հայաստանի Ռոբոտների բաց առաջնության «Իրեր տարբերակող և դասակարգող» մրցույթի մրցանակաբաշխությունը: Տոնակատարությանը ներկա էին ՏՏ ոլորտի ներկայացուցիչներ, տարբեր նախարարությունների և գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների և միությունների ղեկավարներ:

«ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտի լուսաբանումը ՁԼՄ-ներում» մրցույթում ամենից շատ հայտեր ներկայացել էին «Լավագույն հոդված» անվանակարգում, որի շրջանակներում տրվեցին նաև մի քանի խրախուսական մրցանակներ: Ժյուրիի որոշմամբ որոշ անվանակարգերում տրվեցին երրորդ տեղի երկու մրցանակներ, իսկ մի շարք անվանակարգերում չտրվեցին առաջին և երկրորդ տեղի մրցանակներ: Ժյուրին ԻՏՁՄ վարչության անդամներն էին:

Կից ներկայացնում ենք հաղթող լրագրողների անուն-ազգանունները:

«Լավագույն հոդված» անվանակարգ

Առաջին տեղի մրցանակակիր

- Ալբերտ Խաչատրյան /Ռեսպուբլիկա Արմենիա/

Երկրորդ տեղի միցանակակիր

- Լիաննա Գյոզալյան /Ռեսպուբլիկա Արմենիա/

Երրորդ տեղի մրցանակակիրներ

- Յուլիա Կուլիշովա /Դելտոյ Էքսպրես/
- Ալեքսեյ Չալաբյան և Էդգար Ամիրխանյան /Panorama.am/

«Լավագույն հոդված» անվանակարգում խրախուսական մրցանակներ են տրվել՝

- Գայանե Խաչատրյանին /aysor.am/
- Գիրգորի Յուրին /panarmenian.net/
- Սառա Խոջոյան /Արմենիանաու/

«Լավագույն հարցազրույց» անվանակարգ

Առաջին տեղի մրցանակակիր

- Յուլիա Կուլիշովա /Դելտոյ Էքսպրես/

Երկրորդ տեղի միցանակակիր

- Սամվել Ավագյան /Կապիտալ/

Երրորդ տեղի մրցանակակիրներ

- Աշոտ Գարեգինյան /Բազիս/
- Քրիստինե Աղալարյան /Հետք/

«Լավագույն ֆեյդտոն» անվանակարգ

Երրորդ տեղի մրցանակակիր

- Ալբերտ Խաչատրյան /Ռեսպուբլիկա Արմենիա/

«Լավագույն ֆոտոռեպորտաժ» անվանակարգ

Երրորդ տեղի մրցանակակիրներ

- Վարդան Պապիկյան և Անի Աբրահամյան /iReport.am/

«DigiTec Expo 2009 լավագույն լուսաբանում» անվանակարգ

Երրորդ տեղի մրցանակակիրներ

- Սամվել Ավագյան /Կապիտալ/
- Լիաննա Գյոզալյան /Ռեսպուբլիկա Արմենիա/

«Լավագույն հեռուստառեպորտաժ» անվանակարգ

Երրորդ տեղի մրցանակակիր

- Լիզա Գասպարյան /Գալա/